57

Հաստատում եմ՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ
_____ Ս. Մ. Թումանյան
«08» 11 _____ 2019 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության

Նելլի Վանիկի Հունանյանի «Լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները վաղ մանկական աուտիզմով երեխաների հաղորդակցման գործընթացում» թեմայով ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» (Հատուկ մանկավարժություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են ՎՊՀ-ի մանկավարժության ամբիոնի նիստում (07.11.2019թ., արձ. թիվ 5):

Նիստին մասնակցում էին՝ Պ. Գևորգյանը – մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտներ՝ Ա. Մակարյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Հարությունյանը, Լ. Բաղդասարյանը, Ք. Վիրաբյանը, մ.գ.թ., ասիստենտներ՝ Ն. Ներկարարյանը, Լ. Մարուքյանը, մ.գ.թ. դասախոս Լ. Դանիելյանը:

Ըստ համաշխարհային առողջապահական կազմակերպության վիճակագրական տվյալների վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների թիվը տարեցտարի աճում է, և այս համատեքստում ներկայացված ատենախոսության թեմայի արդիականությունը ակնհայտ է, քանի որ այն անդրադառնում է հատուկ մանկավարժության կարևորագույն հիմնահարցերից մեկին՝ լոգոպեդական աշխատանքների առանձնահատկություններին, որոնք պայմանավորում են վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի ձևավորումն ու զարգացումը: Ն. Հունանյանը խնդրո առարկայի շուրջ կատարելով գիտատեսական լայնածավալ և ընդգրկուն ուսումնասիրություն, արդարացիորեն

նշում է, որ վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքային գործընթացն ունի ինքնատիպ և ախտաբանական զարգացում: Հեղինակը փաստում է, որ հաղորդակցվելու ցանկության բացակայությունը կամ հաղորդակցման կարողությունների անբավարարությունը, հանդես է գալիս որպես այդ երեխաների հարմարվողականությանը խոչընդոտող գլխավոր պատճառներից մեկը: Այս համատեքստում հետազոտության արդիականությունն առավել, քան ակնհայտ է, երբ ատենախոսը նշում է, որ գրեթե չկան մայրենի լեզվով մշակված հատուկ մանկավարժական մեթոդական գործիքակազմ, ինչը կարող է նպաստել այդ երեխաների հաղորդակցման գործընթացի զարգացմանը:

Ատենախոսական աշխատանքը շարադրված է համակարգչային բնագրի 150 էջերում, որը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության բնագիրը պարունակում է 8 աղյուսակ, 10 տրամագիր, 7 գծապատկեր, 5 հավելված:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի հրատապությունը, հանգամանորեն ներկայացված է հիմնախնդրի մշակվածության աստիճանը, առաջադրված է վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը ձևավորող և զարգացնող լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունների ուսումնասիրումը և լոգոպեդական մեթոդական գործիքակազմի մշակումը, որպես ուսումնասիրության նպատակ: Ներկայացված են հետազոտության վարկածը, մեթոդոլոգիական հիմքերը, ձևակերպված են հետազոտության խնդիրները, բացահայտված է գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը, առաջադրված են պաշտպանությանը ներկայացվող դրույթները և բնութագրված են հետազոտության հիմնական փուլերը:

Ատենախոսության առաջին գլխում, որը վերնագրված է «Հիմնահարցի դրվածքը, հետազոտության խնդիրները, մեթոդները և կազմակերպումը», ատենախոսը ներկայացնում է վաղ մանկական աուտիզմի մեկնաբանման ժամանակակից տեսանկյունները, անդրադառնում է վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների բժշկահոգեբանամանկավարժական դասակարգման համակարգերին, հանգամանորեն վերլուծում է վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքի զարգացման և հաղորդակցման առանձնահատկությունները:

Ատենախոսը ցույց է տալիս հետազոտության իր գիտական տեսակետը և հիմնավորում այն՝ բացահայտելով բազմաթիվ պատճառներ, որոնք նպաստում են վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացի խաթարմանը և որի զարգացման նպատակով հիմնավորում է, որ անհրաժեշտ է հաշվի առնել լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները: Նման եզրահանգման հեղինակը հանգել է՝ ուսումնասիրելով մասնագիտական ծավալուն գրականություն, արդարացիորեն նշելով, որ հիմնախնդիրը մանկական հոգեբուժության, հատուկ հոգեբանության բնագավառներում դարաշրջան է կազմում, սակայն խնդրի մանկավարժական տեսանկյունը գրեթե ուսումնասիրված չէ: Ահա, թե ինչու Ն. Հունանյանի կողմից իրականացրած գիտական նման աշխատանքը շատ կարևոր նշանակություն է ձեռք բերում:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը վերնագրված է «Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման առանձնահատկությունների հետազոտություն», հեղինակին հաջողվել է կատարել բազմաբովանդակ վերլուծություն և գիտական լուրջ հիմնավորմամբ բացահայտել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման առանձնահատկությունները: Ատենախոսի կողմից իրականացվել է վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման ձևավորմանն ուղղված լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ սոցիոլոգիական հարցում և ստացված արդյունքների հիման վրա ատենախոսը իրավացիորեն փաստում է, որ հայ հասարակության մեջ վաղ մանկական աուտիզմի հիմնահարցը և մասնավորապես այս երեխաների մոտ առկա խոսքային խանգարումները, հաղորդակցման դժվարությունները ոչ միայն դեռևս լիարժեք լուսաբանված չեն, այլև անգամ աուտիզմի ախտորոշման համակարգերն ու ժամանակակից լոգոպեդական ներազդեցության մոտեցումները բավականին ցածր մակարդակի վրա են գտնվում:

Ն. Հունանյանը խնդրո առարկայի շուրջ իրականացրել է ծավալուն և բազմաշերտ հետազոտություն՝ կարևորելով բացահայտել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների վարքային ոլորտի և հայացքով հաղորդակցվելու առանձնահատկությունները, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման միջոցների

կիրառման առանձնահատկությունները, ինչպես նաև վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների իմպրեսիվ և էքսպրեսիվ խոսքի առանձնահատկությունները: Ստացված արդյունքների վերլուծությունը հեղինակին թույլ է տվել փաստել, որ հատուկ մանկավարժության մեջ հիմնահարցը բավարար չափով ուսումնասիրված չէ և խնդրո առարկայի շուրջ՝ գիտական ուսումնասիրությունների ճանապարհով, անհրաժեշտ է մշակել համապատասխան միջոցներ, մեթոդներ և դրանց կիրառման մանկավարժական պայմանները:

Ատենախոսության երրորդ գլուխը, որը վերնագրված է «Վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման գործընթացը զարգացնող լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունները և հիմնական ուղղությունները», մեր կարծիքով այն առավել, քան ամբողջական է դարձնում ատենախոսության հիմնախնդրի վերլուծությունը: Ատենախոսին հաջողվել է համոզիչ փաստարկներով հիմնավորել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների հաղորդակցման զարգացման գործընթացում կարևորվող անհրաժեշտ նախադրյալների ձևավորման և զարգացման մեթոդներն ու միջոցները և դրանք գիտականորեն վերլուծել: Ն. Հունանյանը, հետազոտության արդյունքում ստացված տվյալներին հիմնվելով՝ գիտական հետաքրքիր մեթոդական մոտեցումներ է առաջադրել վաղ մանկական աուտիզմ ունեցող երեխաների իմպրեսիվ և էքսպրեսիվ խոսքի զարգացմանը միտված լոգոպեդական աշխատանքում, որոնց արդյունավետությունը ակնառու փաստում է փորձարարական հետազոտության արդյունքները: Այս ամենը հիմնավորում է հեղինակի կողմից առաջ քաշված առաջադիր վարկածի հավաստիությունը, որի արդյունքները հեղինակն ամփոփում է հետևություններում:

Արժևորելով ատենախոսի կողմից կատարված գիտական աշխատանքը, նրա կարևորությունն ու տեսագործնական արժեքը՝ հարկ ենք համարում նշել նաև որոշ բացթողումներ.

1. Ատենախոսական աշխատանքի առաջին գլուխը շատ ծավալուն է, կարելի էր առավել ամփոփ ներկայացնել մասնավորապես վաղ մանկական աուտիզմի պատճառագիտության մեկնաբանությունը:

2. Ցանկալի էր, որ ատենախոսական աշխատանքում անդրադարձ կատարվեր նաև այս երեխաների նուրբ շարժողականության զարգացմանը՝ այն դիտարկելով որպես խոսքի զարգացման անհրաժեշտ գործոն:

3. Աշխատանքն առավել կշահեր, եթե ատենախոսը հաստատող փորձարարական հետազոտության ընթացքում փորձարկվողների հավաքակազմը, որը ներառում էր 4-7 տարեկան երեխաներ, դիտարկեր և վերլուծեր նախադպրոցական և դպրոցական տարիքային խմբերում:

4. Հետաքրքիր և շահեկան կլիներ, եթե ատենախոսը առավել հանգամանորեն ներկայացներ լոգոպեդական աշխատանքում ընտանիքի մասնակցությունը և խորհուրդներ ծնողներին:

5. Ատենախոսության մեջ առկա են բացթողումներ և տեխնիկական վրիպակներ, օրինակ՝ էջ 113-ում՝ աղյուսակ 6-ում պետք է լինի «գոյականի վերարտադրում», սակայն գրված է «գոյականի վեր», նույն ձևով՝ էջ 114-ում պետք է գրված լինի «թվականի վերարտադրում» և ոչ թե «թվականի վեր»: Որպես բացթողում նշենք, որ էջ 132-134-ում պետք է անընդհատ նշված լիներ, թե կոնկրետ որ աղյուսակի մասին է խոսք գնում, սակայն այդ հղումը հեղինակի կողմից ուշ է կատարված:

Վերը նշված դիտարկումները ամենևին չեն նվազեցնում ատենախոսական աշխատանքի արժեքը:

Սեղմագիրը և հեղինակի հրատարակումները արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Վերը նշվածը թույլ է տալիս կատարելու հետևյալ եզրակացությունը.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նելլի Վանիկի Հունանյանի «Լոգոպեդական աշխատանքների առանձնահատկությունները վաղ մանկական աուտիզմով երեխաների հաղորդակցման գործընթացում» թեմայով ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով, ունի տեսական և գործնական որոշակի արժեք: Այն համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.01 – «Մանկավարժության տեսություն և պատմություն»

(հատուկ մանկավարժություն) մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակը, մեր կարծիքով, արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՎՊՀ- ի մանկավարժության ամբիոնի
վարիչ, մ.գ. դ., պրոֆեսոր՝ Պ. Հ. Գևորգյան

Պ. Հ. Գևորգյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՎՊՀ-ի գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ՝ Ս. Ս. Բեժանյան